

Տէրը ձեզի առաջնորդ դրաւ Յովհաննէս Վարդապետը. եթէ զինք չէք ուզեր, որոշեցէք ձեր թեկնածուն, որպէս զի զրկեմ. կարծեմ՝ թէ լաւ է ամէն երեք տարին ձեզի նոր առաջնորդ մը կարգել: Չայս լսելով, ամէնքը կը հաւանին և կ'ըսեն. «Ահա երեք տարի եղաւ. Մուղնեցին թող ելլէ, երթայ. մեր թեկնածուն մասին կը գրենք Հոգեւոր Տիրոջ»: Սակայն հակառակորդ կուսակցութիւնը կը ջանայ վերահաստատել Մուղնեցին: Եւ դարձեալ խռովութիւնը կ'արժարժուի:

Երկու կուսակցութիւնները հակասական տեղեկութիւններ կը հասցնեն կաթողիկոսին, սխալանքի մատնելով զինք: Այս մասին, Երեմիա Չելպի՝ յայտնի եղիազարեան մը՝ իր Օրագրութեան մէջ կը գրէ. «Ամբաստանութեամբ Մուղնեցւոյն և վկայութեամբ չարկամաց ի թուղթն հաւատացեալ կաթողիկոսն և գրէ ոմանց եղիազարեանց բանադրանս և հաստատութեան գիր առաջնորդութեան Մուղնեցւոյն և առաքէ: Եւ յորժամ մեր կողմի թուղթն հասանէ առ կաթողիկոսն՝ յափշտութիւն առնէ զնա և ասէ. հա՛ս դու առաջ գնացողին և արգիլեա՛ զթղթերս, որ գրեցաւ նախ: Եւ մեր թղթատարն հասանի ի թուխադ և դարձուցանէ մինչ յիջմիածին. ընդ առաջ ելանէ Յակոբս հանդերձ թղթիւս և զմեր թղթատարն լոկ դարձուցանէ, այլ գիր և պատասխանի՝ առ Յակոբն մնայ, և